

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

29. 06. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Խալաթյանը, Ն.Սարգսյանը, Հ.Մկրտչյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյան - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա.Չատինյանը -ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օրակարգում՝

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարարվեց՝

1. Մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Վ.Ասատրյանին, Տ. Բաղդյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին, մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքներում օտարումների և այլ միջոցներից ֆոնդային բյուջեի մուտքերի նկատմամբ, առաջարկություններ ներկայացնել դրանք քաղաքաշինական և հողաշինական ծրագրերի մեջ ներգրավելու նպատակով և մինչև տարեվերջ ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

2. Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

5- օրյա ժամկետում մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին ներկայացնել տեղեկատվություն ՏԱՊ-ի մոնիտորինգի վերաբերյալ:

3. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

5- օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն միջազգային կազմակերպությունների կողմից համայնքներում իրականացվող ծրագրերի և համայնքների կողմից այդ ծրագրերի վերաբերյալ մարզպետարան տեղեկատվություն ներկայացնելու մասին:

4. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ցորենի իրացման գների և գնագոյացման հեռանկարի վերաբերյալ:

5. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Զանազյանին՝ Անհրաժեշտ հսկողություն սահմանել դպոցների վերանորոգման աշխատանքները որակյալ և սահմանված ժամկետներում իրականացնելու ուղղությամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322/4- 32- 99/